ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կառավարում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *բարձրագույն կրթություն, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գլոբալ մրցունակության զեկույց, աշխատաշուկա, բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորում*

Բարձրագույն կրթությունը՝ որպես կրթական համակարգի կարևոր բաղադրիչ, պետության կայուն զարգացման առաջնային նախադրյալներից մեկն է: Սույն հոդվածում քննարկվում են ՀՀ-ում բարձրագույն կրթական համակարգի արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հիմնական խնդիրները, ներկայացվում են վերջինիս արդի վիճակը և համեմատությունները անցյալի հետ՝ ընդգծելով գրանցված աճի միտումները և փոփոխությունները: Որպես կարևոր առանցքային հատկանիշ՝ հոդվածում ուսումնասիրվում է ՀՀ-ում բարձրագույն կրթության արտաքին մրցունակությունը և դիտարկվում է ներկայիս փոխկապակցվածությունը աշխատաշուկայի հետ: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ չնայած անցյալի համեմատ գրանցված որոշակի առաջանցիկ աճերին՝ առկա խնդիրները, այնուամենայնիվ, միմյանց վրա թողնում են փոխկապակցված ազդեցություն՝ հետագա ռիսկեր առաջացնելով բարձրագույն կրթական համակարգի կայուն զարգացման, ինչպես նաև վերջինիս և մնացյալ ենթակառուցվածքների փոխազդեցության գործում:

Ներածություն: Կրթությունը յուրաքանչյուր երկրի բարգավաճման և վերելքի կարևորագույն առաջնային նախադրյալն է: Ժամանակի առաջընթացին զուգահեռ՝ մարդկության առջև ծառանում են այնպիսի գլոբալ և դժվար հաղթահարելի մարտահրավերներ, որոնք լավագույնս հնարավոր է հաղթահարել միայն արդյունավետ կրթական համակարգի միջոցով: Վերջինիս կարևոր և նշանակալից բաղադրատարրը բարձրագույն կրթական համակարգն է:

2019–2020 թվականներն իրենց հետ բերեցին բազում մարտահրավերներ՝ պայմանավորված Covid-19 համավարակով և ՀՀ-ին պատուհասած պատերազմական իրավիճակով: Վերջիններս իրենց անցանկալի ազդեցությունը թողեցին ինչպես տնտեսության մնացյալ ենթակառուցվածքների վրա, այնպես էլ բարձրագույն կրթական ոլորտում՝ սրելով արդեն իսկ առկա խնդիրները և հիմնահարցերը: Եվս մեկ անգամ ապացուցվեց, որ յուրաքանչյուր երկիր կարող է դիմակայել իր առջև ծառացած արհավիրքներին՝ առաջին հերթին որպես կայուն հենք ունենալով ամուր կրթական համակարգը:

Սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է կրթական համակարգի և առավելապես՝ բարձրագույն կրթական համակարգի ոլորտային ուսումնասիրություն վերջին 10 տարիների կտրվածքով՝ ներառելով 2011-2020 թթ. ընթացքում կրթական ոլորտում արձանագրված իրադարձությունները, փոփոխությունները և ընդհանուր շարժընթացը:

Հետազոտության նպատակն է վեր հանել ՀՀ-ում բարձրագույն կրթական համակարգի արդյունավետ գործունեությունը խոչընդոտող հիմնական խնդիրները, արձանագրել դրանք և նախանշել լուծման ուղղությունները:

Գրականության ակնարկ: Բարձրագույն կրթական համակարգի՝ որպես չափազանց կարևոր սոցիալական ինստիտուտի թեման բոլոր ժամանակներում եղել է տեսաբանների ուշադրության կենտրոնում: Որոշ վերլուծաբաններ ընդ-

գծել են բարձրագույն կրթության կարևորությունը հանրակրթության շարունակության տեսանկյունից, մյուսները հատկանշական են համարել բարձրագույն կրթական համակարգի դերը մնացյալ սոցիալական ինստիտուտների կայուն զարգացման գործում, սոցիոլոգների մի ստվար հատված մատնանշել է բարձրագույն կրթության էությունը սոցիոլոգիական մեթոդաբանության տեսանկյունից՝ արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատման միջոցով: Տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ասլանյանը մատնանշել է երկրի և տնտեսության զարգացման գործում բարձրագույն կրթության առաջնային նշանակությունը[1]: Բարձրագույն կրթության ոլորտում տնտեսական առանձնահատկությունների և հիմնախնդիրների արդյունավետ վերլուծության իրականացման գործընթացում տ.գ.թ., դոցենտ Մ. Բադալյանը կարևորել է հասարակական աշխատանքի ամբողջական կառուցվածքում բարձրագույն կրթության բացառիկ տեղի հստակ ըմբռնումը[2]: Տ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը և տ.գ.թ., դոցենտ Ն. Սաֆարյանը բարձրագույն կրթության բնագավառում խնդրահարույց են համարել կրթության որակի բարձրացման, որակի օբյեկտիվ գնահատման համակարգի ներդրման և հետադարձ կապի մեխանիզմների մշակման հարցերը[3]: Հատկանշական է նաև Դերբիի համալսարանի պրոֆեսոր Դ. Հայեսի տեսակետը, համաձայն որի՝ բարձրագույն կրթությունը չի դիտարկվում կրթական հաստատությունների ասպարեզում և վերագնահատվում է բարձրագույն կրթության մեջ մակդոնալդիզացման աճը: Սոցիոլոգը փորձել է ժամանակակից բարձրագույն կրթության խնդիրները քննարկել լայն սոցիալական, քաղաքական և մշակութային համատեքստում՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կտրվածքով[4]:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացնելիս օգտվել ենք համեմատության մեթոդից, որի շրջանակում կատարվել է հետազոտության ոլորտում գրանցված արդյունքների համեմատություն անցյալի և արդի ժամանակաշրջանի միջև: Հիմնվելով արտածության և մակածության մեթոդների վրա՝ որոշակի ուսումնասիրություններ են կատարվել ընդհանուր կրթական համակարգում և տրվել են եզրահանգումներ կոնկրետ բարձրագույն կրթական համակարգի վերաբերյալ: Գիտական վերլուծության հիման վրա իրականացվել են համակարգի բաղկացուցիչ տարրերի առանձին մանրամասն հետազոտություններ, իսկ համադրության մեթոդներով բարձրագույն կրթական համակարգի ուսումնասիրությունն իրականացվել է տնտեսության որոշ ենթակառուցվածքների հետ անքակտելի փոխկապակցվածության մեջ:

---

[1] Տե՛ս **Ա. Ասլանյան**, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը և ոլորտի գնագոյացման հիմնախնդիրները, «Ամբերդ» մատենաշար, 9/1, Եր., «Տնտեսագետ» հրատարակչություն 2014, էջ 5, https://asue.am/upload/files/education-and-science/Aslanyan_A._nor_done.pdf

[2] Տե՛ս **Մ. Բադալյան**, Կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ-ում, «Ամբերդ» մատենաշար, 9/1, Եր., «Տնտեսագետ» հրատարակչություն 2014, էջ 25, https://asue.am/upload/files/education-and-science/Aslanyan_A._nor_done.pdf

[3] Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, **Ն. Սաֆարյան**, Բարձրագույն կրթության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում, Բանբեր Հայաստանի Պետական տնտեսագիտական համալսարանի, Երևան, 2016, ներածություն, https://moodle.asue.am/pluginfile.php/226289/mod_resource/content/1/recrutement_07.09.2013%20%282%29.pdf

[4] Տե՛ս **Зборовский Гарольд Ефимович, Амбарова Полина Анатольевна,** Становление и развитие зарубежной социологии высшего образования (обзор), էջ 39:

Որպես հետազոտության աղբյուրներ՝ օգտվել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կառավարության, ՀՀ ֆինանսների նախարարության և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պաշտոնական կայքերից:

Վերլուծություն: 2020 թ. ՀՀ-ում մատուցված ծառայությունների ընդհանուր կառուցվածքում կրթական ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է 3.1%[1] (կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը կազմել է 53.9 մլրդ ՀՀ դրամ[2]): 2011 թ. ծառայությունների ընդհանուր կառուցվածքում կրթության տեսակարար կշիռը կազմել է 4.7%[3] (կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը՝ 40.8 մլրդ ՀՀ դրամ[4]): Կարող ենք փաստել, որ վերջին 10 տարիների ընթացքում կրթական ծառայությունների ոլորտի միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4%:

Հետաքրքրական է, որ թեև կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը ՀՀ-ում աճի միտում է ցուցաբերում՝ 2020 թ. հասնելով 53,9 մլրդ ՀՀ դրամի, այնուամենայնիվ, դրան հակառակ նվազում է ծառայությունների ընդհանուր կառուցվածքում կրթական ծառայությունների մասնաբաժինը: Վերոնշյալը դիտարկենք գծապատկերի միջոցով (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Կրթական ծառայությունների ծավալը ՀՀ-ում 2011-2020 թթ.***[5]

Վերջին 10 տարիների կտրվածքով ՀՀ-ում ծավալային կրճատումներ են արձանագրվում բարձրագույն կրթական համակարգում: Ահավասիկ՝ բուհերի քանակը կրճատվել է շուրջ 19%-ով (2011 թ. բուհերի քանակը եղել է 68[6], իսկ 2020 թ.՝ 55[7]), ուսանողների քանակը կրճատվել է շուրջ 28%-ով (2011 թ.՝ 95.3 հազար ուսանող[8], 2020 թ.՝ 69 հազար[9]): Վերոնշյալը ներկայացնենք գծապատկեր 2-ում:

---

[1] Տե՛ս Հրապարակումներ, Տարեգրքեր, Առևտուր և այլ ծառայություններ, 2021 թ., էջ 423, https://armstat.am/file/doc/99526898.pdf

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 421, https://armstat.am/file/doc/99526898.pdf

[3] Հրապարակումներ, Տարեգրքեր, Առևտուր և այլ ծառայություններ, 2012 թ., էջ 362, https://armstat.am/file/doc/99471543.pdf

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 360, https://armstat.am/file/doc/99471543.pdf

[5] Մշակված է հեղինակի կողմից:

[6] Տե՛ս Հրապարակումներ, Տարեգրքեր, Կրթություն և մշակույթ, 2016, էջ 124, https://armstat.am/file/doc/99499398.pdf

[7] Տե՛ս նույն տեղը, 2021, էջ 165, https://armstat.am/file/doc/99526838.pdf

[8] Տե՛ս նույն տեղը, 2012, էջ 132, https://armstat.am/file/doc/99499398.pdf

[9] Տե՛ս նույն տեղը, 2021, էջ 166, https://armstat.am/file/doc/99526838.pdf



Գծապատկեր 2. ***Բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսանողների թվաքանակը ՀՀ-ում 2011-2020 թթ.***[1]

Ուսանողների թվի կրճատումը կարող է մի շարք անցանկալի երևույթների հետևանք դառնալ: Դրանցից առավել հատկանշական են միգրացիայի հետևանքով ժողովրդագրական պատկերի փոփոխությունը, բարձրագույն կրթական համակարգի տարեցտարի առավել սրվող հիմնախնդիրները և հանրակրթական հաստատությունների շրջանավարտների տարեցտարի կրճատումը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ այնուամենայնիվ պետք է փաստել, որ ուսանողների թվաքանակի կրճատումը գործոն է, որը պարունակում է ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունն ապահովող նախադրյալներ: Տարեցտարի սրվող մրցակցությունը ստիպում է բուհերին իրականացնել տեսանելի բարեփոխումներ. Բարձրացնել կրթական ծառայությունների որակը, արդիականացնել կրթական ծրագրերը, որոնել ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ, մշակել մրցունակ և գիտատեխնիկական առաջընթացին համընթաց կրթական ծրագրեր և ծառայություններ:

Ուսումնասիրելով գծապատկեր 3-ը՝ կարող ենք եզրահանգել, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների տարածքային համակենտրոնացման մակարդակը ՀՀ-ում խիստ բարձր է: Պետական և ոչ պետական բուհերի մեծ մասը՝ 44 բուհ, տեղաբաշխված է Երևանում (բուհերի ընդհանուր թվի 80%-ը)[2]: Բուհերի մնացած 20%-ը գործում է Սյունիքի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, իսկ Վայոց ձորի և Տավուշի մարզերում գործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխանաբար 1 և 2 մասնաճյուղ[3] (գծապատկեր 4): Բուհերի տարածքային համակենտրոնացման բարձր մակարդակը էական խոչընդոտ է մարզաբնակ ուսանողների համար: Հատկապես առաջնային է համարվում կեցության խնդիրը, որը հնարավոր է լուծել ուսանողների համար բուհերին կից կեցության ապահովման ենթակառուցվածքների առկայությամբ: Սակայն, ընդգծենք, որ ոչ բոլոր բուհերն ունեն վերոնշյալ ենթակառուցվածքները կամ ունենալու դեպքում էլ հնարավորությունները խիստ սահմանափակ են:

---

[1] Մշակված է հեղինակի կողմից:

[2] Սոցիալ-ժողովրդագրական հատված 2021, էջ 246, https://armstat.am/file/article/sv_03_21a_5170.pdf

[3] Սոցիալ-ժողովրդագրական հատված 2021, էջ 246, https://armstat.am/file/article/sv_03_21a_5170.pdf



Գծապատկեր 3. ***Բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնաճյուղերի տարածքային բաշխվածությունը ՀՀ-ում, 2020-2021 ուստարի***[1]

Վերջին տարիներին խիստ անհամաչափ է նաև ուսանողների բաշխվածությունը՝ ըստ մասնագիտական խմբերի: Մասնավորապես դիտարկենք 2020-2021 ուստարվա թվային տվյալները: Ուսումնասիրությունը ներկայացնենք գծապատկեր 4-ի միջոցով:



Գծապատկեր 4. ***ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների բաշխվածությունը՝ ըստ մասնագիտական խմբերի, %***[2]

2020 թ. ուսանողների գերակշիռ մասը՝ 15.4%-ը, մասնագիտացել է «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների խմբում: Նախընտրելի մասնագիտությունների եռյակը լրացնում են «Կրթությունը» և «Սոցիալական և վարքաբանական գիտությունները», որոնցում մասնագիտացել են ուսանողների՝ համապատասխանաբար 15 և 11%-ը[3]: Մեծ թվով ուսանողներ են մասնագիտացել «Բանասիրական գիտություններ», «Առողջապահություն» և «Իրավունք» մասնագիտական խմբերում[4]: Թեպետ վերջին տարիներին ուսա-

[1] Մշակված է հեղինակի կողմից:
[2] Մշակված է հեղինակի կողմից:
[3] Հրապարակումներ, Տարեգրքեր, Կրթություն և մշակույթ, 2021, էջ 167, https://armstat.am/file/doc/99526838.pdf
[4] Տե՛ս Հրապարակումներ, Տարեգրքեր, Կրթություն և մշակույթ, 2021, էջ 167-168, https://www.armstat.am/file/doc/99526838.pdf

նողների ընդունելության որոշակի աճ է արձանագրվում բնագիտական մասնագիտությունների շրջանում, այնուամենայնիվ, բնագիտական և տեխնիկական մասնագիտական խմբերը նախընտրելիության առումով տեսանելիորեն զիջում են վերոնշյալ մասնագիտական խմբերին, ինչը լուրջ մարտահրավեր է պետության համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք եզրահանգել, որ փաստացիորեն խարխլվում է կրթական երրորդ մակարդակի և աշխատաշուկայի կապը: Որոշ մասնագիտությունների նկատմամբ ուսանողների տեսանելի բարձր հակվածությունը և, հակառակ դրան, մի շարք այլ մասնագիտական խմբերի նկատմամբ ցածր նախընտրելիությունը տանում են նրան, որ աշխատաշուկայում աշխատանքի առաջարկը և պահանջարկը չեն հավասարակշռվում: Որպես ասվածի վառ օրինակ՝ կարող ենք մատնանշել այն իրողությունը, որ վերջին տարիներին հանրակրթական հաստատություններում և մասնավորապես դպրոցներում արձանագրվում է բնագիտական խմբերի մասնագետների խիստ պահանջարկ, ինչն էլ փաստում են վերոնշյալ թվային տվյալները: Վերջինիս տրամաբանական պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ սովորողները մասնագիտական ընտրություն կատարելիս առավել հաճախ հաշվի են առնում ոչ թե աշխատաշուկայում առկա պահանջարկը, այլ, այսպես ասած, տվյալ մասնագիտության «ժամանակակից» լինելը:

Մտահոգիչ է նաև օտարերկրյա ուսանողների ցածր թվաքանակը ՀՀ-ում: 2020-2021 ուստարվա տվյալներով՝ օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ-ում կազմել է 5896 ուսանող: Չենք կարող ժխտել, որ վերջին 5 տարիների ընթացքում գրանցվել են օտարերկրյա ուսանողների թվաքանակի աճի որոշակի միտումներ. 2016-2017 ուստարվա համեմատ օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ-ում աճել է շուրջ 55%-ով, սակայն հիմնախնդիրն առավել սրում է այն փաստը, որ օտարերկրյա ուսանողների գերակշիռ մասը՝ 87%-ը, ապահովվում է 5 հիմնական երկրներից՝ ՌԴ, Վրաստան, Սիրիա, Հնդկաստան, Իրան[1]:

Անհրաժեշտ է փաստել, որ բարձրագույն կրթական համակարգի կարևորագույն հիմնահարցերից մեկը բարձրագույն ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների արտաքին մրցունակությունն է: Այս առումով հատկանշական է Համաշխարհային տնտեսական համաժողովի գլոբալ մրցունակության ամենամյա զեկույցը, որի 5-րդ հենասյունը կրթական բաղադրիչն է (5-րդ հենասյուն, Բարձրագույն կրթություն և ուսուցում)[2]: 137 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցրել է 61-րդ հորիզոնականը, թեպետ վերջին 10 տարիների ընթացքում հաջողվել է բարելավել դիրքերը 31 հորիզոնականով: Մրցունակության առումով հայտնվելով միջինից բարձր հորիզոնականում՝ միևնույն է, կոնկրետ կրթության ենթահամաթվով (34.4) զիջում է առավել ցածր հորիզոնականներ զբաղեցրած երկրներին, որոնցից են, օրինակ, հարևան երկրներ Վրաստանը և Իրանը: Ընդհանուր առմամբ, թե՛ կրթության ենթահամաթվով, թե՛ գլոբալ մրցունակության հորիզոնականով ՀՀ-ն զիջում է այնպիսի երկրների, ինչպիսիք են, օրինակ, ՌԴ-ն, Հունաստանը, Լեհաստանը, Ուկրաինան, Լատվիան: Նշվածը դիտարկենք գծապատկեր 5-ի միջոցով:

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 170, https://www.armstat.am/file/doc/99526838.pdf

[2] Global Innovation Index 2020 (Cornell/Insead/WIPO), 13TH EDITION



Գծապատկեր 5. ***Բարձրագույն կրթության ենթահամաթվի գնահատականը՝ ըստ առանձին երկրների***[1]

Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ զարգացած և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների համեմատ ՀՀ կրթական մակարդակը գտնվում է անբավարար մրցունակ վիճակում: Մյուս կողմից, վերոնշյալը ևս մեկ անգամ փաստում է երկրի տնտեսության արտաքին մրցունակության գործում կրթական համակարգի և ուսուցման որոշիչ դերը: Այս իրողությունն առաջին հերթին պետք է ընկալվի որպես առաջնային մարտահրավեր՝ երկրի և տնտեսության առաջանցիկ տեմպերով զարգացման հարցում և ծառայեցվի նպատակին՝ բարձրագույն կրթության որակի բարձրացման, բարձրագույն կրթական համակարգի կողմից մատուցվող ծառայությունների բարձր արդյունավետության ապահովման և ոլորտում առկա հիմնախնդիրների արդյունավետ հաղթահարման միջոցով:

Այն իրողությունը, որ ՀՀ տնտեսությունը կրթական վարկանշավորման ցուցանիշներով զիջում է զարգացած և բարձր եկամուտ ունեցող երկրներին, ևս մեկ անգամ արտացոլում է բարձրագույն կրթական համակարգում ֆինանսավորման հիմնահարցի դերը և կարևորությունը: 2020 թ. ՀՀ պետական բյուջեից բարձրագույն կրթությանը հատկացվել է 12,6 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է կրթության ընդհանուր համախառն ծախսերի 9.8%-ը[2]: 2021 թ. պետական բյուջեի մասին օրենքում բարձրագույն կրթությանը ուղղվել է 11,9 մլրդ ՀՀ դրամ՝ կրթության ընդհանուր համախառն ծախսերի 9.1%-ը[3]: Վերջին 10 տարիների կտրվածքով պետական բյուջեից ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերն աճել են շուրջ 25%-ով (2011 թ. կազմել են 108,4 մլրդ ՀՀ դրամ[4], իսկ 2020 թ.՝ 163 մլրդ ՀՀ դրամ), իսկ բարձրագույն կրթությանն ուղղվող ծախսերը՝ շուրջ 61%-ով (2011 թ. կազմել են 7,8 մլրդ ՀՀ դրամ[5], իսկ 2020 թ.՝ 12,6 մլրդ ՀՀ

---

[1] Մշակված է հեղինակի կողմից

[2] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի մասին», էջ 29, https://www.gov.am/files/docs/3929.pdf

[3] Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2021 թ. պետական բյուջեի մասին», էջ 28, https://www.gov.am/files/docs/4337.pdf

[4] Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2011 թ. պետական բյուջեի մասին», էջ 7, https://www.gov.am/files/docs/671.pdf

[5] Տես նույնը, https://www.gov.am/files/docs/671.pdf

դրամ[1]): Արձանագրենք, որ թեև ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը վերջին 10 տարիներին աճել են շուրջ 51%-ով, այնուամենայնիվ, բարձրագույն կրթությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր կրթական ծախսերի կառուցվածքում աճել է ընդամենը 0.5%-ով: Վերոնշյալը ներկայացնենք գծապատկեր 6-ի օգնությամբ:



Գծապատկեր 6. ***Բյուջեի ընդհանուր ծախսային կառուցվածքում բարձրագույն կրթության ծախսերի տեսակարար կշիռը՝ ըստ տարիների,%[2]***

Բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորման առաջնային բնույթը և կարևորագույն նշանակությունը բարձրագույն կրթության արդյունավետության գործում անժխտելի է: Իրողություն է նաև այն, որ 2021 թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմում է շուրջ 341.4 մլրդ ՀՀ դրամ[3], իսկ պետական պարտքը 2021 թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,400 մլրդ ՀՀ դրամ[4]: Սակայն, նույնիսկ հաշվի առնելով վերոնշյալ փաստերի կարևորությունը՝ կրկին պետք է մատնանշել, որ բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորումն էական հենք է արդյունավետ բարձրագույն կրթական համակարգի կառուցման գործում:

Կատարված դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ անհրաժեշտություն է պետական բյուջեի հիմնական ծախսային ուղղությունների վերանայումը և բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորման հիմնահարցի կարևորության ընդգծումը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը գերազանցապես իրականացվում է ուսանողների ուսման վարձերի միջոցով: Վերջինս հաճախ պատճառ է դառնում բուհերի կողմից ընդունելության վճարովի ուսուցման տեղերի թվաքանակի ավելացման: Արդյունքում, բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից որդեգրված այս քաղաքականությունը թեև դրական միտումներ է արձանագրում ֆինանսավորման առումով, այնուհանդերձ, կարող է հանգեցնել մի շարք բացասական հետևանքների,

---

[1] Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի մասին», էջ 29, https://www.gov.am/files/docs/3929.pdf

[2] Մշակված է հեղինակի կողմից:

[3] Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին», էջ 1, https://minfin.am/hy/page/petakan_byuje_2021t

[4] Տե՛ս ՀՀ կառավարության պարտքի ամսական ամփոփ տեղեկագիր (2021 թվական-հոկտեմբեր) էջ 3, https://www.minfin.am/hy/page/amsakan_ampop_teghekagir/

որոնք արտացոլվում են բարձրագույն կրթության և աշխատաշուկայի փոխազդեցության մեջ և հաստատում կրթական երրորդ մակարդակի և աշխատաշուկայի սերտ փոխկապվածությունը: Ցածր առաջադիմությամբ ուսանողների մասնագիտացումը և այնուհետև արտահոսքը դեպի աշխատաշուկա փոխկապվածության խարխլման, հետագայում անմրցունակ աշխատանքային կադրերի առկայության և որպես հետևանք՝ երկրի տնտեսության արտաքին անմրցունակության և միջազգային ասպարեզում ցածր վարկանիշի վտանգ են ներկայացնում:

Եզրակացություն և առաջարկություններ:

- ✓ Կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը ՀՀ-ում աճի միտում է ցուցաբերում: Դրան հակառակ՝ նվազում է ծառայությունների ընդհանուր կառուցվածքում կրթական ծառայությունների մասնաբաժինը:
- ✓ Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտում թե՛ բուհերի, թե՛ ուսանողների թվաքանակի ծավալային կրճատումներ են արձանագրվում: Վերջինս հիմնականում միգրացիայով պայմանավորված ժողովրդագրական պատկերի փոփոխության, բարձրագույն կրթական համակարգում առկա հիմնախնդիրների սրման և հանրակրթական հաստատությունների շրջանավարտների տարեցտարի կրճատման հետևանք է:
- ✓ ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի տարածքային համակենտրոնացման մակարդակը խիստ բարձր է:
- ✓ Որոշ մասնագիտությունների նկատմամբ ուսանողների տեսանելի բարձր հակվածությունը և, հակառակ դրան, մի շարք այլ մասնագիտական խմբերի նկատմամբ ցածր նախընտրելիությունը հանգեցնում են աշխատաշուկայում աշխատանքի առաջարկի և պահանջարկի անհավասարակշռվածությանը: Կրթական երրորդ մակարդակի և աշխատաշուկայի միջև կապը փաստացի խարխլվում է:
  - Աշխատաշուկայի հետ կրթական երրորդ մակարդակի կապի ամրապնդման նպատակով ուսումնառության ավարտական կուրսերում ուսուցողական փորձառության ավարտից հետո գործատուների կողմից կարող է դիտարկվել որպես աշխատանքային ստաժ:
  - Բուհերում գիտահետազոտական բաղադրիչի ուժեղացումը կարող է հենք հանդիսանալ բարձրագույն կրթություն–աշխատաշուկա կապի արդյունավետ զարգացման գործում:
- ✓ Օտարերկրյա ուսանողների թվաքանակը բարձրագույն ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների համեմատ, գրանցում է տեսանելի աճի միտումներ, սակայն ուսանողների գերակշիռ մասն ապահովվում է միայն 5 հիմնական երկրներից (ՌԴ, Վրաստան, Սիրիա, Հնդկաստան, Իրան):
- ✓ ՀՀ տնտեսության արտաքին մրցունակության ապահովման գործում անժխտելի է բարձրագույն կրթական համակարգի որոշիչ դերը: Ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի գլոբալ մրցունակության ամենամյա զեկույցի արդյունքների՝ վերջինս, զարգացած և բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատ, ներկայումս գտնվում է անբավարար մրցունակ վիճակում:
- ✓ Վերջին 10 տարիների կտրվածքով թեև ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերն աճել են շուրջ 51%-ով, այնուամենայնիվ, բարձրագույն կրթու-

թյանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր կրթական ծախսերի կառուցվածքում աճել է ընդամենը 0.5%-ով:

- Ֆինանսավորման առումով դրական միտումներ գրանցելու արդյունավետ ուղի կարող է հանդիսանալ բարձրագույն կրթության մեջ մասնավոր ներդրումների խրախուսումը:
- Բուհական կրթության արդիականացումը լավագույնս հնարավոր է խթանել բուհերի զարգացմանն ուղղված նորարարական ծրագրերի ֆինանսավորման միջոցով:

✓ Ֆինանսավորման առումով դրական միտումներ գրանցելու նպատակով բուհերի կողմից ընդունելության վճարովի ուսուցման տեղերի թվաքանակի ավելացումը հետագայում կարող է հանգեցնել անմրցունակ աշխատանքային կադրերի առկայության և որպես հետևանք՝ երկրի տնտեսության արտաքին անմրցունակության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասլանյան Ա., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը և ոլորտի գնագոյացման հիմնախնդիրները, «Ամբերդ» մատենաշար 9/1, Եր., «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014:
2. Հովհաննիսյան Ա., Սաֆարյան Ն., Բարձրագույն կրթության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում, Բանբեր ՀՊՏՀ, Եր., 2016:
3. Բաղալյան Մ., Կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների առանձնահատկությունները ՀՀ-ում, «Ամբերդ» մատենաշար 9/1, Եր., «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014:
4. Հրապարակումներ, Տարեգրքեր, Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/am/
5. Հրապարակումներ, Տարեգրքեր, Կրթություն և մշակույթ, https://armstat.am/am/
6. Սոցիալ–ժողովրդագրական հատված, https://armstat.am/am/
7. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի մասին», https://www.gov.am/am/
8. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2021 թ. պետական բյուջեի մասին», https://www.gov.am/am/
9. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2011 թ. պետական բյուջեի մասին», https://www.gov.am/am/
10. ՀՀ Կառավարության պարտքի ամսական ամփոփ տեղեկագիր (2021 թ., հոկտեմբեր), https://www.minfin.am/hy
11. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2021 թ. պետական բյուջեի մասին», https://www.minfin.am/hy
12. Ռազմավարական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, https://escs.am/am
13. Зборовский Г. Е., Амбарова П. А., Становление и развитие зарубежной социологии высшего образования (обзор).
14. Global Innovation Index, 2020 (Cornell/Insead/WIPO), 13TH Edition.

МАРИАМ МАРТИРОСЯН
Менеджмент, бакалавриат, 3-й курс

ПРОБЛЕМЫ СИСТЕМЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В РА

Ключевые слова: *высшее образование, высшие учебные заведения, отчёт о глобальной конкурентоспособности, рынок труда, финансирование системы высшего образования*

Высшее образование, как важный компонент образовательной системы, является одной из приоритетных предпосылок устойчивого развития государства. В данной статье рассматриваются основные проблемы, препятствующие эффективному функционированию системы высшего образования в РА, представляется текущее состояние и сравнение с прошлым, подчеркивая тенденции роста и изменения. В качестве ключевого признака в статье рассматривается внешняя конкурентоспособность высшего образования в РА и рассматривается существующая взаимосвязь с рынком труда. Результаты исследования показали, что несмотря на определенный прогрессивный рост по сравнению с прошлым, существующие проблемы оказывают взаимосвязанное влияние друг на друга, создавая дальнейшие риски для устойчивого развития системы высшего образования, а также во взаимодействии последнего с остальными инфраструктурами.

MARIAM MARTIROSYAN
Management, Bachelor's Degree, 3 rd Year

THE BASIC ISSUES OF HIGHER EDUCATION SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *higher education, higher education institutions, Global Competitiveness Report, labor market, higher education financing*

Higher education, as an important component of the educational system, is one of the primary preconditions for the sustainable development of the state. This article discusses the main issues hindering the effective functioning of the higher education system in the RA, presents the current state of the latter and comparisons with the past, highlighting the registered growth trends and changes. As a key feature, the article examines the external competitiveness of higher education in the RA and considers the current interconnectedness with the labor market. The results of the study showed that, despite a certain progressive growth compared to the past, the existing problems still have an interconnected impact on each other, causing further risks in the sustainable development of the higher education system, as well as in the interaction between the latter and the rest of the infrastructure.